Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 263   ՈՒՐԲԱԹ 16 ՆՈՅԵՄԲԵՐ 1884   (Ն. Տ.) 28 ՆՈՅԵՄԲԵՐ   10 ՍԷՖԷՐ 1302

ՊԱՅՄԱՆՔ

Ծանուցման տողը մէկ անգամի համար 3 ղուրուշ. երկու անգամի համար 2 ղուրուշ է. աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կըլլայ։

Ծրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն պէտք է ուղղել

«Առ խմբագրութիւն ԱՐԵՒԵԼՔ օրագրի»
ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. Գալաթիա, Նորատունկեան խան։
Իսկ գաւառներէն հետեւեալ հասցէիւ՝

درعليه‌ده غلطه‌ده نورادونكيان خانده «ارەولك» غزته‌سى اداره‌سنه

Les annonces sont reçues
à l'EASTERN AGENCY,
Karakeuy, Déirmén han

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ   40 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ	Համար	Տարեկան	գանձման	արժէ	200
»	»	Վեցամսեայ	»	»	100
»	»	Եռամսեայ	»	»	50
»	»	Հատով	»	»	1
Գաւառաց	Համար	Տարեկան	»	»	240
»	»	Վեցամսեայ	»	»	120
»	»	Եռամսեայ	»	»	60
Օտար	երկիրներ	Տարեկան	Ֆրանք		56
»	»	Վեցամսեայ	»		28

Դուրս ղրկուած լրագրաց ճամբու ծախքը խմբագրութեան վրայ է։

Ծանուցմունք կընդունուին
ԻՍԴԸՐՆ ԷՃԷՆՍԻ
գործակալութեան ձեռամբ, Քարաքէօյ, Տէյիրմէն խան։

Կ. ՊՈԼԻՍ

ՈՒՐԲԱԹ 16 ՆՈՅԵՄԲԵՐ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ, հաստատեալ յամին 1851, կը հրատարակուի այժմ իբրեւ Շաբաթաթերթ։

ՄԱՍԻՍ Շաբաթաթերթի մէն մի թիւը կը պարունակէ նոյն շաբթու Ազգային, Ներքին, Արտաքին, Քաղաքական և Գրական բոլոր կարեւոր լուրերն ու տեղեկութիւնները։

ՄԱՍԻՍ Շաբաթաթերթն, իւր մէն մի թուով, կը հրատարակէ նաեւ Խմբագրական Տեսութիւններ, ազգային, քաղաքական, ընկերային, ընտանեկան և անտեսական նիւթերու վրայ։

ՄԱՍԻՍ Շաբաթաթերթին ամեն թիւը կը պարունակէ նաեւ օգտակար յօդուածներ գիտական և պատմական զանազան նիւթոց վրայ, հետաքրքրաշարժ և բարոյալից նորավէպեր, և ընտիր թարգմանութիւններ ու քերթուածներ։

ՄԱՍԻՍ Շաբաթաթերթն հանդէս մ'է և Լրագիր մ'է միանգամայն։

ՄԱՍԻՍ Շաբաթաթերթի մէն մի թիւը կը բաղկանայ մանր և հոծ տառերով կազմուած 20 երեսներէ, և տարին կը կազմէ աւելի քան 1,000 երեսներէ բաղկացեալ ընտիր հատոր մը մաքուր տպագրութեամբ, իւր Յաւելուածներէ զատ։

ՄԱՍԻՍ Շաբաթաթերթի տարեկան գինն է միայն ԿԷՍ օսմանեան ոսկի, և վեցամսեայն ՔԱՌՈՐԴ օսմանեան ոսկի։ Ձեռքէ կը ծախուի 60 փարա գնով։ Թղթատարութեան տարեկան ծախքն է միայն 15 ղրուշ։

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

Կ'երեւի թէ ոմանք տակաւին չեն հասկցած մանաւոր հանգամանքի մը կարեւորութիւնն, որ՝ ինչպէս ուրիշ առթիւ մը աշխատեցանք ցոյց տալ՝ անհրաժեշտապէս պահանջելի է Նոր Պատրիարքէն։

Ներսէս Պատրիարքէն յետոյ չենք կրնար մեղ Պատրիարք ընտրել եկեղեցական մը որ մտային և բարոյական ձրից կողմէ Ն. Սրբազնութենէն վար կը մնայ բոլորովին։ Նոր Պատրիարքը պէտք է որ ժամանակիս պահանջմանց համաձայն կրթուած, ուսեալ և հմուտ եկեղեցական մը լինի, միանգամայն օժտեալ անստգիւտ վարուք ու բարուք իբրեւ եկեղեցական։ Աւելորդ է երկարօրէն բացատրել այս պայմանի կարեւորութիւնը։ Կ. Պոլսոյ Պատրիարքը Պետն է Թուրքիոյ Հայոց ազգային և կրօնային վարչութեան։ Նա գերագոյն ներկայացուցիչն է Ազգին։ Արդ, որպէս զի ազգն, հանդերձ իւր եկեղեցական դասով, ժամանակին պահանջած զարգացման ճամբուն մէջ մանէ, պէտք է որ Պատրիարքն իւր ներկայացուցիչը լինի այնպիսի զարգացման մը։ Ազգին ու երկրին պայմաններն յոյժ փոխուած են 20-30 տարիներէ ի վեր, և ժամանակիս պիտոյից համաձայն Պատրիարք մը պարտինք ունենալ՝ եթէ չենք ուզեր ետ մնալ ժամանակին հոսանքէն։ Ցաւալի կ'ըսուի թէ ամեն ինչ Պատրիարքէն կախում ունի։ Մեծ դեր մը կը տրուի նմա՝ ազգային և եկեղեցական վիճակի բարուոքման մէջ։ Բայց յայնժամ ի՞նչպէս կարելի է անտարբեր լինել ապագայ Պատրիարքին մտային և բարոյական հանգամանաց։ Ո՛չ ապաքէն ամեն պաշտօնատար ա՛յնչափ և ա՛յնպէս միայն կարէ պաշտօնավարել, որչափ կը ներեն իւր մտային և բարոյական ձիրքեր։—Եպիսկոպոս մը որ պարզ գրաբար գիրք մը հազիւ կը հասկնայ, որ հեղինակութիւն մը չունի, ուրիշ լեզու բնաւ չիմանար, և ուսումնասիրութեանց բնաւ չէ աշխատած, և բաց աստի, յոյժ հեռի է բարոյական անստգիւտ անցեալ մ'ունենալէ, ի՞նչպէս կրնայ յարմարիլ Պատրիարքական պաշտաման պահանջմանց։ Ո՞վ կը համարձակի այդպիսի եկեղեցականի մը փոխանցել Ա. Տ. Ներսէս Վարժապետեան գործն, որոյ վրայ ա՛յնչափ խօսուեցաւ վերջին տարիներու մէջ։ Անոնք որ մի կողմէ կը պնդեն ազգային-եկեղեցական ներքին բարենորոգմանց պէտքին վրայ, և միւս կողմէ կը քարոզեն թէ Պատրիարքն ամեն ինչ է Ազգին մէջ, ի՞նչպէս կրնան այժմ Պատրիարքական պաշտօնն յանձնել այնպիսի եկեղեցականի մը, որ իւր մտային և բարոյական հանգամանօք ստուգիւ ամենեւին անյարմար է այդպիսի ծանր պաշտօն մը վարելու և այդպիսի բարձր ակնկալութիւններ արդարացնելու։

Ո՛չ միայն յառաջդիմութեան, այլ նաեւ ինքնասիրութեան խնդիր մը կայ Ազգին համար, երբ կ'ըսենք թէ, ընտրելի Պատրիարքն իւր նախորդէ ստորին պէտք չէ լինի մտային և բարոյական ձրից կողմէ։ Ամեն ազգի մտային և բարոյական մակարդակն աւելի կամ նուազ կը չափուի նորա Գլխոյ մտային և բարոյական հանգամանքէն։ Ուսեալ, հմուտ և այլ բարձր արժանեօք օժտեալ Պատրիարք մ'ունենալ ո՛չ միայն շահ մ'է ազգին համար, այլ նաեւ պատիւ մը։ Բարեբախտաբար, ունինք բարձրաստիճան եկեղեցականներ որք այս գիրքը կրնան բռնել ազգին գլուխը։ Հանրութեան ձայնը մեզմէ առաջ և մեզմէ աւելի մատնանիշ կ'ընէ զայնս։ Հա՞րկ է ուրեմն երթալ որոնել այնպիսի ընտրելիներ, որք ստուգիւ ո՛չ մտային կրթութեան, ո՛չ ալ բարոյական հանգամանաց կողմէ չեն կրնար բնաւ արժանիք ունենալ հոգելոյս Ներսէս Պատրիարքին յաջորդելու, և որք ստուգիւ բնաւ չպիտի կրնան այնպիսի բարձր աստիճանի մը վրայ պահել ազգին յարաբերական վիճակն։

Ո՛չ միայն փափաքելի է, այլ նաեւ ամեն Ազգային Երեսփոխանի էական պարտաւորութիւնն է հոգ տանիլ որ ընտրուի այնպիսի Եպիսկոպոս մը, որ իւր մտային և բարոյական ձրիւք պատիւ բերէ Պատրիարքական պաշտաման, և կարող լինի արդարացնել իւր վրայ դրուած ակնկալութիւններն, ի մասին ազգային և եկեղեցական բարուոքմանց, զորս արդի ժամանակը կը պահանջէ։ Այս պարտաւորութենէ կը բխի ուրիշ պարտաւորութիւն մը։ Տեարք Երեսփոխանք պարտին քիչ մը աշալրջութիւն ցոյց տալ, և մանաւանդ պէտք հոգ տանիլ յաջողման մեր նկարագրածին նման ընտրելոյ մը։ Օրինակ մը պիտի ցուցնէ աշալրջութեան պէտքը։—Մեք ընտրելի Եպիսկոպոսաց անուններ չպիտի յիշենք, զի լոկ սկզբունքի խնդիր մը կը քննենք։ Ենթադրենք առաջին գծի վրայ գտնուող երեք Եպիսկոպոսներ, Ա. Բ. Գ.։ Ենթադրենք նաեւ թէ ասոնց առջի երկուքն ըստ կարի կը յարմարին վերոգրեալ իտէալին, այսինքն Պատրիարքական պաշտաման պահանջած մտային և բարոյական ձիրքերն ունին. իսկ Գ. բացարձակ զուրկ է անոնցմէ։ Եթէ Ա. և Բ. ընտրելեաց կուսակիցք պնդեն իրենց մասնաւոր ընտրելեաց վրայ, բաժանուածն կրնան օգտիլ Գ. ընտրելոյ կուսակիցք և յաջողցնել նորա ընտրութիւնն։ Ուստի, հոգելոյս Ներսէս Պատրիարքին արժանաւոր յաջորդ մը տալու փափաքն զմեզ կը մղէ ազդուապէս յանձնարարելու Տեարց Երեսփոխանաց, որ եթէ այս նպատակաւ հարկ իսկ լինի զիջումներ ընել միմեանց, յօժարակամ յանձն առնուն սա՛ մտածմամբ թէ, երբ Լաւն ու Լաւագոյնը կը գտնուին Անյարմար ընտրելոյ մը դէմ, խոհեմութիւն և ազգասիրութիւն է Լաւագոյնը զոհել Լաւին, քան երկուքն ի միասին՝ բաժանման պատճառաւ՝ զոհել բոլորովին Անյարմար ընտրելոյ մը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԵՐԼԻՆԻ ԴԵՍՊԱՆԱԽՈՐՀՐԴՈՅՆ ԱՌԹԻՒ

(Թայմզ լրագրոյ Բարիզի թղթակից Պ. տը Պլովիցի կողմէ։)

ԲԱՐԻԶ. 17 Նոյ.—Հիմա որ Պերլինի մէջ նոր Դեսպանախորհուրդ մը կը գումարի, խնդիր է թէ ի՛նչ նպատակ, ի՛նչ նշանակութիւն ունի այս գումարումն։ Լիազօրք անորոշ հրահանգներ ունենալ կը թուին։ Բորդուկէզ պատուիրակաց պաշտօնն է բողոքել Ստորին Քոնկոյի վրայ Բորդուկէզի իրաւանց անտես առնուելուն դէմ։ Անգլիացին թոյլ չպիտի տայ որ Նիկեր գետին խառնուի Դեսպանախորհուրդն։ Իտալացին զինեալ է մարդասիրական հրահանգներով, ի մասին վաճառականութեան ազատութեան և գերեվաճառի ջնջման. մինչ Սպանիացւոյն յատուկ պաշտօնն է յոյժ քաղաքավար լինել, ցոյց տալու համար ի՛նչպիսի հաճոյական հիւրէ մը Եւրոպա զրկած է ինքզինք վերջին 70 տարւոյ մէջ, յորս իւր խորհրդոց չէր ընդունած Սպանիան։ Միայն Ֆրանսա և Գերմանիա, դուցէ նաեւ Աւստրիա և Ռուսիա հիմնագրոյ նման բան մ'ունենալ կը թուին. բայց այս ալ Դեսպանախորհրդոյ արտաքին նպատակը միայն ցուցնել կը թուի։

Խնդրոյն ներքին գոյնն հասկնալու համար, պէտք է նախ մերժել ֆրանսական լրագրաց ոմանց անտեղի ենթադրութիւնը թէ, Անգլիա կ'ուզէ Պերլինի Դեսպանախորհուրդն ի գերեւ հանել՝ Լոնտոնի Դեսպանախորհրդոյն ամլութեան վրէժը լուծելու համար։ Բայց Անգլիա բնաւ անյաջողութիւն մը չկրեց Լոնտոնի Դեսպանախորհրդին ապարդիւն լուծմամբ։ Անխոհեմաբար ինքնին հրաւիրելէն յետոյ զայդ Դեսպանախորհուրդ, Անգլիա ձեռքէն եկածն ըրաւ ապարդիւն թողլու համար զայն։ Անգլիա Դեսպանախորհրդոյ մասնակցեցաւ այն տեսութեամբ թէ Ֆէլլահը չի կրնար հանդուրժել նոր տուրք, և թէ արժեթղթերը պարտի վճարել ամբողջ։ Միւս համայն լիազօրք, և Ֆրանսացին ընդ նոսին, պնդեցին թէ Ֆէլլահը կրնայ վճարել, և թէ արժեթղթերը պարտաւոր չէ վճարել անոր տեղ։ Յայտնի էր արդէն թէ այս Դեսպանախորհուրդ չպիտի յաջողէր. ուստի, Պ. Կլատստոն և Լորտ Կրանվիլ վրէժ մը չունին լուծելու։ Աւելի ճշմարիտ է ըսել թէ Պիսմարք իշխանն ինք վրէժ մ'ունի լուծելու, քանզի Լորտ Կրանվիլ՝ Լոնտոնի Դեսպանախորհրդին մէջ բացարձակապէս մերժեց Պիսմարք իշխանին Մինստեր կոմսի միջոցաւ ներկայացուցած առաջարկութիւնն, որոյ նպատակն էր Եգիպտոսի Քառանթինայի խնդիրը քննել։ Պիսմարք իշխան յայնժամ չուզեց անյաջողութիւն խոստովանիլ՝ ետ կանչելով Մինստեր կոմսն։ Աւելի Պիսմարքեան ոճով կ'ուզէ վրէժ հանել։ Եւ ահա Մեծն Բրիտանիա կը մասնակցի Դեսպանախորհրդոյ մը, զոր ինք չհրաւիրեց, և որոյ արդիւնքն՝ ընդհանրապէս կը կարծուի թէ՝ աննպաստ պիտի լինի Անգլիոյ։ Դեսպանախորհրդոյ իրական նպատակն է՝ կ'ըսուի՝ ցոյց տալ Անգլիոյ և համայն աշխարհի թէ Մեծն Բրիտանիա բոլորովին մեկուսացեալ է։

Տարիներէ հետէ Պիսմարք իշխանին գլխաւոր նպատակն եղած է իրարու ձգել Ֆրանսան և Անգլիան։ Նա գործի ձեռնարկեց 1878 ի Վեհաժողովոյն մէջ։ Հոն Իշխանը, Կիպրոսի Դաշնագրէն վշտացած, և իւր աշխարհակալութիւններն ամբողջացնելու և ամրապնդելու պէտքն զգալով, ջանաց գժտութիւն ձգել Ֆրանսայի և Անգլիոյ միջեւ, մին դէպ ի Թունուզ մղելով, միւսը դէպ յԵգիպտոս։ Պերլինի Վեհաժողովոյն մէջ կը պատմուէր թէ Իշխանն ըսեր է Կրանդ զօրավարին. «Աշխարհակալ մը «իրապէս մեծ է յաչս պատմութեան, «երբ իւր երկիրը բացարձակ, անվիճելի կերպիւ տէր կը թողու իւր աշխարհակալութեանց, և երբ չի պարտաւորեր զայն անտանելի բեռ մը կրել իւր աշխարհակալութեանց պաշտպանութեան համար։» Այս խօսքով կը բացատրուի Պիսմարք իշխանին աշխարհավարութիւնն ալ։ Նա տեսաւ որ ցորչափ Անգլիա և Ֆրանսա միացեալ կը մնային, ինք չպիտի կրնար բացարձակ տէր լինել Եւրոպիոյ ցամաքին վրայ։ Ընդհակառակն, երբ ի գլուխ հանէր Անգլիան և Ֆրանսան իրարմէ հեռացնելու և Ֆրանսան Գերմանիոյ հետ բարեկամացնելու հսկայական խորհուրդն, Աւստրիա և Ռուսիա բաժին չունենալով գործին մէջ, Իտալիա շարժելու անկարող գոլով և Սպանիա՝ բոլորովին իւր ներքին գործովք զբաղեալ, ո՛չինչ արգելք պիտի լինէր Պիսմարք իշխանին՝ «յաչս պատմութեան մեծ մարդ մը» նկատուելու։

Եւ իրօք, նախ Թունուզ և ապա Եգիպտոս Ֆրանսայի և Անգլիոյ յարաբերութեանց մէջ սաստիկ ձգտում պատճառեցին։ Ճիշդ ի միջոցին յորում Թոնքինն նոր խառնաշփոթութիւն մը կը մուծանէր երկուց ազգաց փափուկ յարաբերութեանց մէջ, Անգլիա Դեսպանախորհրդոյ մը հրաւիրեց զԵւրոպա։ Գերմանիոյ շնորհիւ, Եւրոպա Ֆրանսայի յանձնեց Դեսպանախորհրդոյ նախնական պայմաններուն վրայ բանակցիլ Անգլիոյ հետ։ Ֆրանսան էր որ Դեսպանախորհրդոյ մէջ ներկայացուցիչ հանդիսացաւ Եւրոպիոյ ընդդիմութեան Անգլիոյ խորհրդոց։ Դեսպանախորհուրդը լուծուեցաւ, և ահա սաստիկ հականգլիական զգացում մը արտայայտեցաւ թէ՝ Գերմանիոյ և թէ՝ Ֆրանսայի մամլոյն մէջ ընդհանրապէս։

Միւս կողմէ, Գերմանիա մեծագոյն բարեկամութիւն մը սկսաւ ցուցնել Ֆրանսայի։ Յուլիս 14ի Ազգային Տօնին օրը Բարիզի ամբոխը բզկտեց ու կոխկրտեց գերմանական երկու դրօշներ, և անարգեց Գերմանացի մը։ Պերլինէն եկած հրամանաց վրայ, Բարիզի գերմանական դեսպանն անձամբ յանձնարարեց իրեն պաշտօնակից դեսպաններուն և դիւանագէտներուն որ կարեւորութիւն չընծայեն այս դէպքի։ Երկու ֆրանսացի սպայք ձերբակալեցան մինչ կը զբաղէին գերմանական բերդերու յատակագծերն հանելու։ Ամեն մարդ կը կարծէր թէ անոնց բանը լըմնցած էր։ Բարեբախտաբար, գերման կառավարութիւնը չուզեց հետք տալ գործին, Ֆրանսացիները չվշտացնելու համար։ Ծանուցի արդէն թէ Գերմանիա լքած է Մատրիտի մէջ առաջնակարգ դեսպանութիւն մը հաստատելու խորհուրդն, որուն դէմ աչքով կը նայուէր ի Բարիզ, և հաւանած է մասնակցիլ 1889ին Բարիզի մէջ տեղի ունենալիք Արուեստահանդէսին։ Ֆրանսայի հաճոյ երեւալու համար Պիսմարք իշխանի արարք շատ են։ Պերլինի ֆրանսական դեսպան Պ. տը Քուրսէլ յատուկ շնորհներու կ'արժանանայ Իշխանին և կայսերական արքունեաց կողմէ։ Նա միակ Դեսպանն է ում Պիսմարք իշխանը բացատրութիւններ տըւաւ Սքերնեւիձէի տեսակցութեան նկատմամբ, միակ Դեսպանն որ կ'երթայ Վարձին՝ Իշխանին գիւղային բնակավայրը, միակ դեսպանն որ մասնակցեցաւ այժմեան առեղծուածային Դեսպանախորհրդոյ պատրաստութեան, որուն այնչափ կարեւորութիւն կ'ընծայուի առերեւոյթս, բայց որուն բուն նպատակն անհասկնալի կը մնայ։

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

)(90)(

ՖՈՐԹՈՒՆԷ ՏԻՒ ԲՈՒԱԳՈՊԷ

ՊԱՐՈՆ ԼԸՔՈՔԻ ԾԵՐՈՒԹԻՒՆԸ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՐՈՆ ԼԸՔՈՔ ԿԸ ԳՈՐԾԷ

Բ.

—Ո՞ւր։

—Ուր որ ուզէք, ձեր տուն, իմ տուն։ Սակայն աւելի լաւ կը համարիմ ձեր տուն, վասն զի, կը հասկընաք, ձեր յաճախ իմ սանդուղներէս վեր ելնելը տեսնողները կրնան բամբասել։ Թաղիս բնակիչները գիտեն որ ես երբէք կնոջ չեմ վարեր բնակարանիս մէջ, և որովհետեւ դուք ամուսնացած էք...

—Իսկ երբոր դուք իմ խանութս գաք, յաճախորդ կը կարծեն ձեզ։

—Այո՛, բայց ես չեմ ուզեր քիթս ցուցնել Արպալէթ փողոցին մէջ։ Ոստիկանութեան լրտեսներն անշուշտ կը պտըտին անդ մերթ ընդ մերթ, վասն զի լսած եմ թէ ոստիկանութիւնը տակաւին կը յուսայ Լըքոքի մեղսակից մը ձեռք ձգել, և ես չեմ ուզեր անձս վտանգի ենթարկել։

Եթէ այն կողմերն յարմար տեղ մը գիտէք, ուր կարենանք դիւրաւ գտնել, ճաշարանի համար պանդոկ մը, ճաշարան մը...

—Գիտեմ հատ մը, Օբիթալի պուլվարին վրայ, Թէթ-Նուար նշանակով։

—Մէջը սենեակներ կա՞ն։

—Սենեակներ, ընկերութեան դահլիճներ, եւ կերակուր մը, որ մարդ կերած ժամանակ մատները կը լիզէ, և Մոնֆերմէյի պատուական գինի, որ նոյն Էկէփի համ ունի։

—Ուրեմն, հայրենակի՛ց, ճշդիւ մեր ուզած տեղն է։ Եւ եթէ յանձն կ'առնուք ամեն իրիկուն գալ ճաշել անդ ժամ եօթնուկէսին կամ ութին միջոցները, ցերեկուան ըրածնիդ կը պատմէք ինձ, ես ալ տասն հատ հինգ ֆրանքնոց կուտամ ձեզ։

—Ճաշին ստակն ալ դո՞ւք պիտի տաք։

—Տարակոյս չկայ, բայց պայմանաւ մը, այսինքն Տիկին Ժանէթ ալ պարտի գտնուիլ։

—Շատ պարկեշտ մարդ էք, քաղաքացի՛, չէ չեմ ըսեր, գոչեց Օվէրնացին։

—Ուրեմն որոշուած է, վաղ իրիկուն կ'սպասեմ ձեզ։

—Որոշուա՛ծ է, որոշուա՛ծ է, շատ շուտ կ'երթանք, հայրենակի՛ց, ըսաւ Օվէրնացին, որ իբր խոհեմ լեռնական չէր սիրեր թեթեւօրէն խօսք տալ։

Նախ պարտիմ գիտնալ թէ ի՛նչ է ընելիքս. Անգլիուհւոյն սպասուհին գտնել, հասկցայ զայդ, բայց դիւրին գործ չէ։

Պահ մ'առաջ տեսանք զայն, բայց թերեւս վերստին չտեսնենք երբէք։

—Եթէ սպասէք որ Արպալէթ փողոցէն անցնի, տարակոյս չկայ թէ յաւիտեան չէք կրնար տեսնել, վասն զի մէկ մ'ալ չերթար հոն։ Բայց եթէ Փարիզի դեղեցիկ թաղերուն մէջ պտըտիք, շատ հաւանական է որ հանդիպիք նմա։

—Պտըտի՛մ։ Հապա առուտո՞ւրս։

—Ձեր հօրաքրոջ երթալու համար չպիտի՞ թողուք ձեր առուտուրը։

—Բայց հօրեղբօրորդիս՝ Բիէր Քուլթօլան՝ մեր խանութը պիտի սպասէ, ըսաւ Ժանէթ, որ գեղջուկ տիկնանց պարապորդ կեանքը վարելու դաղտնի բաղձանքն ունէր միշտ։

—Նախ, ըսաւ Բիէտուշ, կարելի է որ այս օրէն յաջողիք։ Սպասուհին դէպ գնաց, ուր երկար ժամանակ չը պիտի կենայ, վասն զի տիկինը չտանիր իւր հետ։ Եթէ իրիկուան կառախումբին հանելուն սպասէք, ինձ այնպէս կը թուի թէ անպատճառ կը հանդիպիք նմա։

—Եւ եթէ հանդիպինք, պիտի բռնե՞նք զինքն։

—Ամենեւի՛ն, ըսաւ Բիէտուշ, դէչ բան կ'ընէք, և իշխանազունն ալ չկըրնար բան մ'իմանալ։

Առանց բնաւ բան մ'ըսելու պէտք է ետեւէն երթալ և գիտնալ թէ ո՞ւր կ'երթայ։

—Ետեւէն երթա՛լ, կարելի չէ, քաղաքացի՛։ Նա իրեն յատուկ կառք մ'և ձիեր ունի, որոց սրունքն իմիններէս աւելի ուժեղ են։

—Ա՞յդ է ձեզ շփոթեցնողը. կառք մը կը բռնէք և տասն ֆրանք կուտաք կառավարին, որ իւր ձիերը կը ճաթեցնէ և Անգլիուհւոյն կառքին պոչէն չզատուիր։

—Տասն ֆրա՛նք, տասն ֆրա՛նք. առատ առատ կը ջարդէք, գոչեց Օվէրնուհին։

—Օ՛ն, հայրենակի՛ց, ըսել է թէ վստահութիւն չունիք իմ վրայ և գրպանէս կ'ուզէք։ Ահաւասիկ, ըսաւ Բիէտուշ, բաճկոնին գրպանէն երկու լուի և երկուք ալ հինգ ֆրանքնոց հանելով։

Ես հարուստ չեմ, բայց կրնամ կանխիկ տալ ձեր օրականն։ Իշխանը կը վճարէ վաղը։

Օվէրնացին տենչափայլ աչօք ոսկիներուն կը նայէր, բայց կը վարանէր առնուլ։

Ժանէթ առաւ դրամը նետեց ըսելով.

—Մերժելու անարգանքը չպիտի ընես պարոնին։

—Ձեր ամուսինն ալ չպիտի զղջայ ընդունելուն վրայ, սիրելի՛ տիկին, գոչեց Բիէտուշ։

Մտածեցէք անգամ մը, երեք հազար ֆրանք պարգեւ։

—Բուժինեու հօրաքեռ ժառանգութեան քովի արտը կը գնենք, ըսաւ Ժանէթ, որ նոյն միջոցին Եւայի դերը կը կատարէր իւր ամուսնոյն քով։

—Եւ փոխարէն շատ արցախներ վառել հարկ պիտի լինի ձեզ, որպէս զի այնչափ դրամ կուտէք, ըսաւ տը Լաք փողոցի ինքնակոչ քաղաքացին։

Ածխավաճառն, յաղթուելով, բռնցքի տնկեղ հարուած մը տուաւ սեղանին և գոչեց.

—Ի՛նչ որ ալ է կ'ընդունիմ։

—Շա՛տ աղէկ ըրիք, ըսաւ Բիէտուշ։ Ահաւասիկ դուք ալ հարուստ պիտի լինիք, և եթէ կը հաւատաք ինձ, անմիջապէս գործի սկսեցէք։

Նախ, եթէ ես ձեր տեղը լինէի, խանութ կը վերադառնայի դա ծրարներն հոն թողլու համար։ Վասն զի ձեր այդ սակառներով, անկողիններով և ամաներով շատ աչքի կը զարնէք, և դեռ բաւական ժամանակ ունիք ձեր առջեւ։

Եթէ Անգլիուհին Փարիզ վերադառնայ այս իրիկուն, վերջին կառախումբով միայն կուգայ։ Դուք անկէ առաջ կայարանը կը գտնուիք։

—Եթէ չվերադառնայ այս իրիկուն, վաղն ալ պիտի դա՞նք սպասե՞նք։

—Ո՛չ, պէտք չէ որովհետեւ կըրնայ կառքով վերադառնալ։

Վաղը ձեր տունը կը նստիք հանգիստ մինչեւ ժամ երեք։

Ժամ երեքին, տիկին Կալուբիա կը հագուի. դուք ալ, հայրենակի՛ց, ձեր կիրակնօրեայ լաթերը կը հագնիք, և երկուքդ իմիասին թեւ թեւի տուած կ'երթաք կը պտըտիք նախ Շանզ-Էլիզէի զբօսավայրն, և ապա Պուլոյնի ծառաստանն։

Անցնող կառքերն և անոնց մէջի տիկնայքը կը դիտէք։

Անգլիուհին անշուշտ իւր տիրուհւոյն տունէն փախչելէն ի վեր ինքզինք զբօսանքի տուած է։

—Ընող է դարչելին, մռմռաց Ժանէթ։

—Այո՛, բայց ծանր պիտի նստի իրեն, ըսաւ ածխավաճառն։ Եթէ տեսնեմ, ետեւէն պիտի երթամ մինչեւ որ իմանամ իւր բնակած տեղը, թէ և վեց փարսախ ճանբայ քալել հարկ լինի ինձ։

—Եւ եթէ վաղը չտեսնէք, հետեւեալ օրը նորէն կ'սկսիք, և այնպէս շարունակաբար։

—Մէկ մի անգամն յիսուն ֆրանքի։

—Տարակոյս չկայ։ Եւ ամեն իրիկուն Թէթ-Նուար պանդոկը պիտի ճաշենք իմիասին։

—Ուրեմն, քաղաքացի՛, խօսքէն դարձողը վատ է, և պիտի ցուցընեմ ձեզ թէ ես անպիտան մարդ չեմ։

Օ՛ն, քալէ, Ժանէ՛թ, մեր կարասին տուն տանինք, իմացնենք մեր Քուլթօլան հօրեղբօրորդւոյն թէ չպիտի երթանք, և խանութը գոցենք։

Իրիկուան հօս պիտի վերադառնանք և կայարանին դուռն սպասենք, վաղն ալ տիկինները աչքէ պիտի անցունենք Շանզ-Էլիզէի և Պուլոյնի զբօսավայրերուն մէջ, և յետոյ, կեցցէ ուրախութիւն և...

Ժանէթ արդէն ոտքի վրայ էր, և Բիէտուշ պանդոկին սպասաւորը կը կոչէր որպէս զի խմուած ըմպելիներուն ծախքը վճարէ։

—Առանց մնաք բարեաւի, հայրենակի՛ց, ըսաւ, մինչ Օվէրնացին անոր երկու ձեռքը կը սեղմէր ճարճատեցընելով. իշխանը մեծապէս գոհ պիտի լինի երբոր իմանայ թէ սպասուհին գտնելու աշխատող մէկ մը գտած եմ։

Զարմանալի՛ խնդութիւն մ'է այդ միլիոնատէրին ըրածը. բայց ի՛նչո՞ւ պէտք, բաւական հարուստ է իւր խելքին փըչածն ընելու համար։ Այդպիսի մարդու մը դրամները շահելու նայեցէք, օրհնած հաց կը լինի։

Միայն թէ ջանացէք որ տուած դրամին փոխարէնն ստանայ. այսինքն՝ սպասուհին ձեզ տեսնելէն յետոյ Անգլիա չփախչի։

Եթէ յանցաւոր է, և նշմարէ որ զինքը կը դիտէք, կրնայ կասկածի երթալ, վասն զի կը ճանչէ ձեզ, այնպէս չէ՞։

(Շարունակելի)

Այլ ոչ՛ փոյթ ։ Կա՛մ ամեն լիազօրք պիտի ընդունին Պիզմարք իշխանին գաղափարն, և յայնժամ պիտի տեսնուի թէ Իշխանն Եւրոպական աշխարհակալութեան տէրն է, և կա՛մ Անգլիա միայն (իբրև մեծագոյն գաղթային տէրութիւնը) պիտի ընդդիմանայ նմա, և յայնժամ Իշխանը ցոյց տուած պիտի լինի թէ յաջողած է բոլորովին մեկուսացնել զԱնգլիան ։ Չեմ ուզեր վիրաւորել Պերլինի այժմեան Դեսպանախորհրդոյն մասնակցող դիւանագիտաց դիւրազգածութիւնները, բայց 1878 ին միեւնոյն պալատան նոյն դահլճին մէջ ի խորհուրդ գումարեալ քաղաքագէտներն էին Պիքընսֆիլտ, Կորչաքոֆ, Սալիսպըրի, Շուվալոֆ, Քորթի, Անտրաշի, Սէն–Վալիէ, Վատինկթըն և Օտօ Ռուսէլ, և պէտք չունիմ յիշեցնել ձեզ թէ ո՛րպիսի զօրաւոր, կամ լաւ ևս՝ ո՛րպիսի տիրական ձեռամբ մը Պիզմարք իշխանը վարեց Վեհաժողով մը յորում կը փայլէին այդպիսի անուանք ։ Ինչպէս պիտի վարէ այժմեաններուն նման մարդոցմէ բաղկացեալ Դեսպանախորհուրդ մը ։ Պիզմարք իշխանին գաղափարները միայն պիտի փայլին, և ամեն ոք կը պնդէ թէ Անգլիա պիտի մեկուսացուի, եթէ սակայն ուրիշ տէրութեանց ետեւ տեղ մը չըռնէ։ Այսպէս, Պիզմարք իշխանին նպատակն է Եւրոպան տեսնել սա կացութեան մէջ. —Անգլիա՝ մեկուսացեալ, Ֆրանսա՝ Գերմանիոյ հետ ներդաշնակութեամբ գործող, Ռուսիա և Աւստրիա՝ Դանուբի կողմերն իրենց համար փոխարինութիւններ ձեռք բերելու ազատ, Իտալիա՝ չէզոքացեալ ֆրանքօ–գերմանական համաձայնութեամբ, և Սպանիա՝ չէզոք մնալով արդէն բարեբախտ։ Ֆրանսայի հետ բարեկամ և գործակից լինելու համար, Պիզմարք իշխանն Ալզաս–Լոռէնի մասին զիջում ընելէ զատ ուրիշ ամեն զիջում յանձն կ'առնու ընել, և այս պատճառաւ ներկայ Դեսպանախորհրդին ալ մինչեւ առաջ կատարելապէս համաձայնած է Ֆրանսայի հետ։ Այժմեան Դեսպանախորհուրդը միջոց մը պիտի լինի Պիզմարք իշխանին համար՝ ցոյց տալու թէ Անգլիա բոլորովին մինակ մնացած է Եւրոպայի մէջ, և անկարող է դիմադրել Ֆրանսայի և Գերմանիոյ միացեալ գործողութեան ։ Այս է ընդհանուր կարծիքն ի Բարիզ ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՕՏԱՐ ԹՂԹԱԲԵՐՆԵՐԷՆ ՔԱՂՈՒԱԾ

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՀԱԲԵՇՔ · Բէթըրսպուրկ, 22 նոյմ. Պ. Խուդեքոֆ, Մոսքովսքի Վէտոմոսթի լրագրոյ մէջ յօդուած մը կը հրատարակէ Հաբէշստանի վրայ ։ Կը յայտնէ այն մասնաւոր համակրանք զոր Ռուսիա կը տածէ այդ երկրի նկատմամբ, որոյ բնակիչք կը պատկանին Օրթոտոքս եկեղեցւոյն (°), և կը յիշեցնէ թէ մի քանի տարի առաջ Հաբէշք համակրութիւն ցոյց տուին Ռուսիոյ, Զարին ղրկելով նամակներ, յորս «Զօր հաւատոյն Քրիստոնէից» տիտղոսը տուեր էին նմա։ Վէտոմոսթի կը յարէ թէ մտադիր չէ յարուցանել հաբէշական խնդիր մը, բայց չի կրնար մոռնալ որ ռուսական նաւեր յաճախ կ'անցնին Կարմիր ծովէն, թէ պէտք ունին հանքածխոյ մթերանոց և կայարան մը գտնելու Կարմիր ծովու եզերաց վրայ, և թէ ի մօտոյ հարկ պիտի լինի հիւպատոսութիւն մ'ալ հաստատել հաբէշական հողին վրայ ։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ · Նէշ, 22 նոյմ. Օսմանեան կառավարութեան երկրաչափ–ճարտարապետ մը Բրիշդինա հասաւ, Թուրքօ–Սերպիական երկաթուղեաց միացման աշխատութիւնները կազմակերպելու համար ։

ՖՐԱՆՍԱ ԵՒ ՉԻՆ · Պրեստ տը լ'Իլ օրաթերթը կը ծանուցանէ թէ 10,000 Չինացիք կը քալեն Կարմիր գետի կողմէ (Թոնքին) Ֆրանսական զօրաց դիրքերուն վրայ ։ Զօրավարին աւելի նոր մէկ հեռագիրը նոյն կողմեր Չինացոց կրած մէկ նոր պարտութիւնը կ'իմացնէ ։—Ըստ վերջին լրոյ, Ֆրանսա ընդունած է Անգլիոյ միջնորդութիւնը ։

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ · Բարիզի Երեսփոխանական ժողովոյ նոյմ. 20ի նստին մէջ, Պ. Ժ. Ֆէրրի չուզեց պատասխանել եգիպտական խնդրոյ վիճակին վրայ հարցման մը, յայտարարելով թէ տակաւին Անգլիա որ և է զեկուցում չէ ըրած Բարիզի կառավարութեան՝ վերաբերմամբ լորտ Նորթպրուքի տեղեկագրոյն ։ — Այսօր գրէթէ ստոյգ է թէ «Լորտ Նորթպրուքի տեղեկագիր» մը գոյութիւն չունի · որովհետեւ թէեւ Լորտն ինչ ինչ առաջարկներ ըրած էր Եգիպտոսի ելեւմտից բարւոքման համար, բայց Պ. Կլատըստոնի նախարարութիւնն անընդունելի դատած է զայնս ։

ՄԱԿԵԴՈՆԻԱ ԵՒ ԱԼԲԱՆԻԱ · Վիէննայէ կը հեռագրուի առ Տէյլի Թէլէկրաֆ թէ յոյն և իտալացի դրամատիրաց խմբակ մը կ'աշխատի Բ. Դռնէն արտօնութիւն ստանալ Վալոնայի, Քաստորիոյ և Սէլանիկի միջեւ երկաթուղւոյ մը շինութեան համար, դիւրացնելու համար վաճառականութիւնն ընդ մէջ Իտալիոյ և Պալքանեան զանազան երկիրներու ։ Նոյն միջոցին Պրինտիզի և Վալոնայի միջեւ շոգենաւուց կանոնաւոր երթեւեկութիւն մը պիտի հաստատուի։ Երկաթուղին ռազմագիտական կարեւորութիւն ևս պիտի ունենայ Թուրքիոյ համար, ըստ որում պիտի դիւրացնէ զօրաց փոխադրումը Մակեդոնիոյ և Ալպանիոյ մէջ սաղերն · և այս երկու գաւառներն ուղղակի յարաբերութեան մէջ պիտի դնէ Թուրքիոյ միւս գաւառաց հետ ։ Այս առաւելութեանց փոխարէն, յիշեալ դրամատէրք դրամական նպաստ մը կը խնդրեն Թուրք կառավարութենէն ։

—Թայմզ արեւելեան Ալպանիոյ մէջ ծագած խռովութեանց վրայ ինչ ինչ լուրեր կը հրատարակէ ։ Իպրահիմ փաշա երկու վաշտով գացեր է Բրիզրէնի մօտերն հաւաքուած Ալպանիացւոց վրայ, որք կ'երեւի թէ տրոց մասին գանգատներ ունին եղեր ։ Ալպանիացիք թէեւ որ և է բռնութիւն ի գործ չեն դրեր, բայց փաշան պէտք տեսեր է աւելի զօրաց ։ — Բարիզի լրագիր մ'ալ աւելի անհաւանական լուրեր կուտայ քաղաքական դրդուութեան մը վրայ որ կը տիրէ Ալպանիացւոց մէկ մասին մէջ, և սացա կողմէ հանուած թուղթի կտոր մը խօսքը կ'ընէ · բայց վերապահութեամբ պէտք է ընդունիլ այս լուրեր ։

ՖՈՐՄՈԶԱ · Քուրպէ ծովակալն իւր գրահաւորին մէջ արգիլած է անգլիացի քանի մը սայլներ, որք թիւրիմացութեամբ մը Ֆորմոզա կղզին եկած էին, պաշարման արգելքին հակառակ ։ Անգլ. սայք թէեւ լաւ ընդունելութիւն գտած են Ֆրանսական մարտանաւուն մէջ, կը բողոքեն այս ձերբակալման դէմ։

ՕՍՄ. ՊԱՆՔԱ · Վիէննայէն նոյմ. 21 թուով առ Թայմզ Օսմ. Պանքայի տնօրէնը Բարիզ գնաց Օսմ. ընկերութիւն մը կազմելու Ռումէլիի Օսմ. երկաթուղեաց շինութեան և շահագործման համար ։—Օսմ. կառավարութեան կողմէ պատուիրակ մ'եկաւ Բրիշդինա, Թուրքօ–Սերպ երկաթուղեաց միացման կէտն որոշելու ։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿ
ԱՄԵՆԱՊԱՏԻՒ
Տ· ՄԱԿԱՐ ՍՐԲԱԶԱՆԻ

Ինչպէս որ Էջմիածնայ Ս. Սինոդն Հոգելոյս Տ. Ներսէս Պատրիարքի վախճանման առթիւ յառաջագոյն իւր ցաւակցութիւնն յայտնած էր հեռագրով, այժմ ևս Կաթողիկոսական Տեղակալ Ամեն. Տ. Մակար Սրբազան Արքեպիսկոպոս Բջնիէն հետեւեալ ցաւակցական գիրն ուղղած է առ Գեր. Ամենապետն Կրօնական Ժողովոյ, Խորէն Նարպէյ Սրբազան ·

«Գերապատիւ Ամենապետի Կրօնական Ժողովոյն Հայոց Կ. Պոլսոյ Խորէն Սրբազան Արքեպիսկոպոսի ·

«Սիրեցեալ Եղբայր ի Քրիստոս ·

«Մահագոյժ համբաւ կնքեցման կենաց յաւերժայիշատակ Պատրիարքին Հայոց Կոստանդնուպոլսոյ Տեառն ՆԵՐՍԻՍԻ Արքեպիսկոպոսի Վարժապետեան իբրև զկայծակն յամպոց երկնից թռուցեալ կարեվէր խոցեաց զսիրտս մեր և ամենից ազգայնոց մերոց որք ընդ ոլորտս տիեզերաց, և կարի յիրաւունս, զի որ ի կատարեալ հասակի փորձառու կենաց երախտաւորութեան իւրոց ունէր առաւել քան զաւել առաքինանալ յասպարէզի ազգային և եկեղեցական վսեմ գործոց ըստ օժտեալ ինքեան ի վերուստ բնական և բարոյական ձրից հոգւոյն, ահա՛ ի նմին առոյգ հասակի կենաց կնքեաց զիւր մահկանացուն՝ թողլով զազգն ի տարտամ վիճակի, զազգային և եկեղեցական գործս ի թերակատար դրութեան և զամենայն զհոգեւորականս ի մանկոց վարանման ։ Եւ ա՛յսպէս՝ մեք ոչ ևս ունիմք զՆԵՐՍԷՍ, որ լի արդիւնաւոր գործովք առաքինութեան վերապայծառ ունել զվարձս վաստակոց իւրոց, այլ ցաւիմք և ողբամք ընդ մերս թշուառ և ապաբաղդ դրութիւն · քանզի մինչ ըղձայր եւ փափաքէր օրհնեալ ազգն մեր զայրութեանն բառնալ զքօղ ի դիմաց Մօրն Լուսոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի, և ահա՛, ըստ մերոյս ապաբաղդութեան, նոյն քօղ սգաւորութեան շրջապատեաց և զԱթոռ Պատրիարքութեան Հայոց Կոստանդնուպոլսոյ ։

«Այժմ, Գերապատիւ Սրբազան Եղբայր, ոչ ևս է ՆԵՐՍԷՍ ի միջի, ուրեմն զի՞նչ պարտիմք առնել · զի ողալ, ողբալ և տրտմագնեալ վարանիլ ընդունայն ինչ են · այլ պարտ և արժան է Ձեզ, ըստ Աստուածատուր պարգեւաց և քանքարաշատ շնորհացդ մխիթարել ի Հոգին Սուրբ և մխիթարել զբազմապատուարժան Անդամս Կրօնական, Քաղաքական և Ազգային Ժողովոց ի կենդանի գլուխն Եկեղեցւոյ Քրիստոսի՝ մաղթելով ի Հօրէն Լուսոյ հանգուցանել զհոգի բազմարդիւն Հովուապետին ՆԵՐՍԻՍԻ ի լոյս երեսաց իւրոց և փութալ ձեռնարկել յընտրութիւն նորոյ Պատրիարքի ի գերարժան Հոգեւորականաց Ազգիս, հաւատի գոլով՝ զի որ զօրացոյց զհանգուցեալն ի գործ Պատրիարքական պաշտաման, զօրացուսցէ՛ անշուշտ և զնորընտրեալն նախնի ողեւորութեամբ և գաղափարաւ յօգուտ և ի բարեկենդանութիւն բազմախուռն Հայ Ազգիս ։

«Յանձն արարեալ զԳերապատիւ Սրբազնութիւնդ և զՊատուարժան Անդամս Կրօնական, Ազգային և Քաղաքական Ժողովոց ի մխիթարութիւնն Երկնից՝ մնամք,

Գերապատիւ Սրբազան Եղբայրութեանդ
Աղօթակից
ՄԱԿԱՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ի 6ն Նոյմ. 1884 ամի
ի Բջնի.

Աղթամարայ Ամեն. Խաչատուր Կաթողիկոսն հետեւեալ ցաւակցական հեռագիրն ուղղած է առ Գեր. Տ. Խորէն Նարպէյ Արքեպիսկոպոս ·

(Բնագիր)

Երմէնի մէճլիսի րուհանի րէյիսի Սէրփիսքօփոս Նար Պէյէ

Փաթրիգ Ներսէսին իրթիհալը տարը պագասի մահզունիյէթ ֆէվքէլատէ օլուպ տուա օգունմաք իւզրէ ումում քիլիսէլէրէ թէնպիհաթ իճրա օլունդուղունտան սիպարիշ մահսուսումըզ զիւտէրէ տուա օլունմասը սիլիւրքիլուր ։

Կաթողիկոս Մէլլէթի
Էրմէնիյան Աղթամար
ԽԱՉԱՏՈՒՐ

Առ Ամենապետն Կրօնական Ժողովոյ Հայոց Նար Պէյ Սրբազան

Ներսէս Պատրիարքի վախճանման լուրը խորին ցաւօք լսեցինք · աղօթարարուած լինելով բոլոր եկեղեցեաց մէջ պաշտօններ կատարել, մեր վանուց մէջ ևս հոգեհանգստեան մեծ հանդէսներ կատարուեցան ։

Կաթողիկոս Հայոց Աղթամարայ
ԽԱՉԱՏՈՒՐ

Քաղաքական Ժողովն իւր վերջին նստին մէջ տնօրինութիւն մ'ըրաւ վերաբերմամբ ազգայնոց առողջապահական վիճակին ։ Տեղեկանալով թէ երկու ախտեր, կրուփ (դըղըլ) և տիֆթէրիա (դուշ պօղան) կը ճարակին մայրաքաղաքիս մէջ, որոշեց Շրջաբերականներ ղրկել մայրաքաղաքիս Թաղխորհրդոց, որպէս զի մէկ մէկ բժիշկ կարգեն՝ Թաղային դպրոցներն ամեն առաւօտ այցելելու համար, որպէս զի եթէ այդ ախտերէ վարակեալ աշակերտ վրայ ախտանիշ տեսնուի, տուն ղրկուի՝ թէ՛ դարմանուելու և թէ՛ վարակման առաջքն առնելու նպատակաւ։ Ծնողաց վրայ եւ մեծ պարտականութիւն կայ, այսպիսի պարագայից մէջ, բացառիկ ուշադրութիւն ընծայելու իրենց զաւակաց առողջական վիճակին։

Քաղաքական Ժողովն հաւանեցաւ Տիվրիկի Ազգ. կալուածոց Հոգաբարձութեան առաջարկին, որ, ինչպէս երէկ ծանուցինք, կը խնդրէր իրենց նորաշէն Արամեան դպրոցը նուիրել Հոգելոյս Պատրիարքին անուան ։

Կիւրինի ազգային ժողովները հեռագրաւ կը խնդրեն որ Ղեւոնդ եպիսկոպոս, որ, ինչպէս յայտնի է, Կիւրին կը գտնուի բաւական ժամանակէ հետէ, Առաջնորդ լինի իրենց ։ Իսկ եպիսկոպոսը կը հեռագրէ թէ ինք կ'ուզէ Կ. Պոլիս գալ ըստ կոչման Խառն ժողովոյ, բայց Կիւրինցիք թոյլ չեն տար ։ Միւս կողմէ, Պլէճիկի առաջնորդական տեղապահ Յովսէփ վարդապետ կը ծանուցանէ թէ իւր «Պույրուլթին» ընդունած է, և սկսած է պաշտօնավարել ըստ օրինի, բայց Ղեւոնդ եպիսկոպոս անդադար կը հեռագրէ իւր կուսակցաց թէ ի մօտոյ Պլէճիկ իւր առաջնորդական վիճակը պիտի վերադառնայ ։ Իսկ Պլէճիկի Գաւառական ժողովն, որ յառաջագոյն խնդրած էր քանիցս Ղեւոնդ եպիսկոպոսի հրաժարեցումն, այժմ նորա վերահաստատութիւնը կը խնդրէ, «որովհետեւ Ղեւոնդ եպիսկոպոս 200 ոսկւոյ չափ պարտք ունի Պլէճիկցիներու»։

Աւասիկ առաջնորդական կարի հետաքրքրաշարժ և գրեթէ գայթակղական խնդիր մը ։

Ծանօթ է Խառն Ժողովոյ որոշումն յայսմ մասին, որ է՝ Ղեւոնդ եպիսկոպոսին բնաւ պաշտօն չտալ մինչեւ որ Կ. Պոլիս գայ ։

Պուլկարիոյ Հայոց Գեր. փոխ–Առաջնորդն ի դիմաց Պուլկարիոյ Հայոց իւր ցաւակցութիւնը յայտնած է առ Գեր. Ամենապետն Կրօնական Ժողովոյ ուղղեալ Նամակաւ մը ։

Նմանապէս Մանչէսթրէն Սարգիս էֆէնտի Ֆընտըքլեան՝ Մանչէսթրի Հայոց ցաւակցական զգացմանց թարգման կանգնած է առ Ն. Սրբազնութիւն ուղղեալ Նամակաւ մը ։

Ռումանիայէն Ստեփան էֆէնտի Գօտէրեան ևս հետեւեալ ցաւակցական Նամակն ուղղած է առ Գեր. Նարպէյ Արքեպիսկոպոս ·

«Սրբազան Ներսէս Պատրիարք Հօր կորուստ զիւրաքանչիւր Հայն ի սուգ թողեց · ուստի ես ալ կուգամ այսօր իբր Հայու որդի տխրական պարտականութիւն մը կատարել իմ խորին ցաւակցութիւնս յայտնաբերելով և ի մէջ բազում պսակաց որովք շրջապատեալ է դամբանն յիշոն մեծ բարերարին, տացէ Աստուած որ իմ այս քանի մը տող ընդունելութիւն գտանեն ։

«Միանգամայն ի սրտէ կը մաղթեմ որ Ամենակարողն Աստուած ի սփոփումն վշտաց ազգիս մերոյ, Ներսէս Սրբազանին այդ փայլեալ Աթոռին վրայ արժանի և լուսամիտ յաջորդ մը նուիրէ։ Կը խնդրեմ, իմ սիրելի Սրբազանս, ցաւակցութեանս թարգման լինիլ առաջի Ազգային Պատրիարքարանի։

«Մնամ Ձեր Սրբազնութեան խոնարհ որդի

Ստեփան Գօտէրեան

7 Նոյեմ. 1884

Ուսումնական Խորհրդոյ ԼԲ. նիստը տեղի ունեցաւ երէկ ի Ղալաթիա ։

1. Ազգային վարժարանաց մէջ Տաճկերէն լեզուի ուսուցման մասին Նախընթաց նստի որոշմամբ հրաւիրեալ տաճկագէտ դասատուներէն Արիկեան Միհրան և Գալֆաճեան Պօղոս էֆէնտիները ներկայացած ըլլալով՝ Խորհուրդը հրահանգ տուաւ յիշեալ էֆէնդիներու որ իրենց հետ առնելով Խամերեան Սեդրակ էֆէնտին այցելեն ազգային վարժարաններն և քննեն թէ Տաճկերէն լեզուի ուսումն որո՞ց ձեւով և ի՞նչ աստիճան կը մշակուի և ի՞նչ է աշակերտաց վիճակն և իրենց տեղեկագիրը բերեն խորհրդոյ ։

2. Խորհուրդն ընդարձակ խորհրդակցութիւն մ'ունեցաւ Ազգային Կրթական ընդհանուր օրինաց ծրագրոյն վրայ և որոշեց իւր յաջորդ նիստը սոյն խնդրոյն յատկացնել ։

3. Որոշեց որ իւր անդամակիցներէն Փափազեան Նշան և Մելիքեան Մկրտիչ էֆէնդիներն այսօր՝ ուրբաթ այցելեն Եէնի գաբուի Ազգ. վարժարանները, քննելու համար Հայկանուշ վարժարանի խնամակալութեան և Թաղխորհրդոյ միջև գտնուած խնդիրն ։

4. Գեր. Պատր. Փոխ. Հօր մի պաշտօնագրոյն վրայ ի նկատի առաւ Սղերդի Առաջ. Տեղապահ Գեր. Նէվրուզեան Յովհաննէս վարդապետի ազգասիրական և ուսումնասիրական ջանքերն և գոհութեամբ տեղեկացաւ որ յիշեալ Գեր. Տեղապահն վերջին չորս տարւոյ միջոցին իւր վիճակին մէջ հինգ վարժարաններ կառուցեր է, Տիլ, Պաւքոյ, Պերան և Հեչոյ գիւղաքաղաքներու մէջ և մէկ քարուկիր ընդարձակ վարժարան Սղերդի մէջ ։

5. Նարլը գարուի Հոգաբարձութեան խնդրոյն վրայ որոշեց գրել թէ վարժարանի մրցանակաբաշխութիւնն կրնայ յառաջիկայ կիւրակէ կատարել անշուք կերպիւ, ի սուգ երջանկայիշատակ Ս. Պատրիարք Հօր մահուան, եթէ ոչ հարկ է 15 օր յետաձգել հանդիսաւոր կերպիւ ընելու համար ։

6. Իւսկիւտարի ուսուցչաց ոմանց կողմէ մի հանրագիր մատուցուած ըլլալով աչաղուրկ Կէզիւրեան Թագէոս պատուելիի վիճակին նկատմամբ և նկատելով որ Ուսումնական խորհուրդն արդէն բազմիցս պարագաներու մէջ օգնած է յիշեալ պատուելիի և իւրեն նպաստաւոր պաշտօններ առաջարկած և ի մասնաւորի Սենեքերիմեան ընկերութեան հետ շահաւէտ կարգադրութիւններ ըրած է, իւր պարտաւորութիւնը վերջացած համարելով նկատողութեան չառաւ զայն ։

Բաց ասոնցմէ խորհուրդն զբաղեցաւ Ֆէրի գիւղի, Գուրուչէշմէի և Պէյքոզի կրթական և այլ մասնաւոր կարգադրական խնդիրներով ։

Լրագրական ասպարիզին վրայ ծանօթ Տ. Գ. Բէլէկեան էֆէնտի այս օրերս պիտի ձեռնարկէ հրատարակել «Ծէնա» անուամբ գրական և գիտական շաբաթաթերթ մը, հայատառ և թրքաբարբառ ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Առեւտրական նախարար Սուպհի փաշայի հանգուցեալ հայրը Սամի փաշա, ի կենդանութեան իւրում Իմթիազի պատուանշանն ստացած լինելով, Վեհ. Սուլթանն այժմ նոյն պատուանշանը շնորհեց նորա որդւոյն Սուպհի փաշայի ։

Ուստի Ն. Վսեմութիւնն երէկ Կայսերական պալատը գնաց իւր շնորհակալութիւնները մատուցանելու առ Վեհ. Սուլթանն ։

Ռուսական դեսպան Պ. Նէլիտոֆ իւր ուղեւորութիւնը վերջնապէս վաղուան թողած է ։ Կ'ըսուի թէ դեսպանը մեկնելէ առաջ անգամ մ'եւս պատիւ պիտի ունենայ Վեհ. Սուլթանին ներկայանալու։ Իսկ Տիկին Նէլիտոֆ՝ Թրիեստի ճամբով Իտալիա պիտի երթայ ։

Դեսպանատան խորհրդական Պ. Օնուի՝ Լիզպոնի (Բորթուկալ) դեսպան անուանուիլը ճիշդ է, այսու հանդերձ Պ. Օնու պիտի վարէ Պոլսոյ դեսպանատան գործերն ի բացակայութեան Պ. Նէլիտոֆի ։

Նախընթաց օրը Ռուսիոյ Կայսրուհւոյն ծննդեան տարեդարձին առթիւ ընդունելութիւնք եղան ռուսական դեսպանատան մէջ ։ Կայսերական պալատան և Բ. Դրան կողմէ յատուկ պաշտօնատարներ ղրկուեցան ի շնորհաւորութիւն ։

Ռուսիոյ արդի Կայսրուհին՝ Մարի Ֆէօտորովնա, ծնած է 1847 Նոյեմբեր 2ին, հետեւաբար 37 տարեկան է ։ Տանիմարքայի Քրիստիան Թ. թագաւորին աղջիկն է և 1866 նոյեմբեր 9 ին ամուսնացած է Ալեքսանդր Գ. Կայսեր ։

Ընթերցողք կը յիշեն անշուշտ Բերայի Նախորդ կառավարիչ Պահրի փաշայի ծանուցեալ դատը ։ Պետական խորհուրդը մանրամասն քննութեան առած էր անոր դէմ եղած ամբաստանութիւններն և այս նպատակաւ կազմեալ յանձնաժողովը տեղեկագիր մը պատրաստած է որ կատարելապէս կը հաստատէ, ըստ Մօնիթէօրի, արդարութիւնն յիշեալ բարձրաստիճան պաշտօնէին, որ արդէն իսկ ազատ է դատաստանէ և որ եւ է պատասխանատուութենէ ։

[illegible], Քրիստոնեաներէն զինուոր առնելու առաջարկին, զոր Թուրք թերթ մ'ըրած էր, սկզբամբ հաւանելով, սա խորհութիւնը կը պատմէ իւր երէկի յօդուածին մէջ ·

«Նախորդ սերնդեան մէջ Թուրքիոյ առաջնակարգ քաղաքագէտք այս բարենորոգման (Քրիստոնեաներէն զօրք առնելու) կողմն էին ։ Րէշիտ, Ֆուատ և Ալի փաշայք համամիտ էին, և կը կարծենք թէ Սուլթան Ապտ–իւլ–Մէճիտ ևս ։ Այս իմաստով օրէնք մ'ալ խմբագրեցաւ և ընդունեցաւ Նախարարական մեծ ժողովէն, և Սուլթանին Իրատէն կը սպասուէր ։ Պատրիարքները խնդրոյն մանրամասնութեանց վերաբերեալ ինչ ինչ պարագայք մէջ բերին, և անշուշտ ընտիր պատճառներով, խնդիրը կանգ առաւ հոն ։ Երբ 1853ին պատերազմ ծագեցաւ Ռուսիոյ հետ, այս գաղափար նորէն յուզուեցաւ ։ Այն ատեն շատ մը բոլոնացի գաղթականք կ'ապրէին ի Թուրքիա ընդ պաշտպանութեամբ Սուլթանին, որ Ռուսիոյ տիրապետութենէ հալածեալ, չէր ուզած յանձնել զայնս ։ Ասոնց մէջ էր քաջարին և խելացին Սատըք փաշա, որ Իսլամութիւն ընդունած էր երախտագիտութեամբ ։ Սատըք փաշա Բոլոնիոյ հալածողաց դէմ իւր ատելութիւնը ցոյց տալու համար, հեծելազօրաց երկու գունդ կազմեց ։ Ասոնք Քրիստոնեաներէ բաղկացեալ էին, մեծ մասամբ Բոլոնացի, և Պուլկարք ոմանք ևս Օսմանեան դրօշին ներքեւ մտան, և Դանուբի վրայ մարտնչեցան Էօմէր փաշայի հրամանաց տակ ։ Այս երկու գունդերէ մին այսօր կարծենք Ադրիանուպոլիս կը գտնուի, միւսն ի Լիբանան ։ Երկուքն ալ տակաւ առ տակաւ Իսլամութիւն ընդունեցին, թէեւ ի Լիբանան գտնուող գունդին Քրիստոնեայ մը կը հրամայէ դեռ ։»

Որպէս կը յիշեն ընթերցողք, Ն. Կ. Վեհափառութիւնն ասկէ առաջ հրամայած էր որ Օսմանեան քաղաքային և զինուորական բոլոր բարձրաստիճան պաշտօնատարաց լուսանկարները պարունակող Ալպոմ մը պատրաստուի ։

Թէրճիմանը Հագիգաթ կ'ըսէ թէ յիշեալ պաշտօնատարաց շատերը փութացած են իրենց լուսանկարներն հանել տալ Կայսերական Լուսանկարիչ Բարկօբուլոյ էֆէնտիի գործարանին մէջ, և միացեալներն ևս հետզհետէ պատրաստել կուտան ։

Օրտուէն ամսոյ 10 թուականաւ և 20 գաղթականաց ստորագրութեամբ առ Թէրճիմանը Հագիգաթ ուղղեալ հեռագիր մը դարձեալ դառնալով կը գանգատի Տրապիզոնի կուսակալ Սըրրի փաշայի դէմ, բողոքելով որ երբեք լաւ աչքով չնայիր գաղթականաց վրայ, և գաւառին մէջ ի գործ դրուած անկարգութեանց հեղինակ կը ճանչնայ միշտ գաղթականները ։

Թէրճիմանը Հագիգաթ կ'ըսէ թէ այդ իմաստով ուրիշ հեռագիր մ'ալ եկած էր իրեն, բայց արժան չէր դատած հրատարակել, ըստ որում չէր յուսար որ Սըրրի փաշա այդպիսի ընթացքի մը մէջ գտնուի ։

Նէոլոգոս կ'ըսէ թէ Յունաց եկեղեցական առանձնաշնորհմանց խնդրոյն կարգադրութեան համար Թուրքիոյ ամեն էն հեռաւոր գաւառաց յոյն բնակչաց կողմէ դեռ մինչեւ ցայսօր շնորհակալութեան ուղերձներ կը հասնին, լի երախտագիտական զգացմամբ, առ Վեհ. Սուլթանն ուղղեալ։

Մեծ Եպարքոս Բարձր. Սայիտ փաշա կիւրակէ օրը կայսերական Թիֆէնկպաշ Հիւսէյին Հիւսնի փաշայի ապարանքն երթալով Նորին Վսեմութեան հիւանդագին վիճակէն լուրեր հարցուց ։

Քաղաքապետ Մազհար փաշա, որ անձնական տկարութեան պատճառաւ քանի մ'օրէ ի վեր իւր ապարանաց մէջ մնալ հարկադրուած էր, երէկ պաշտօնատեղին եկաւ ։

Առողջապահական յանձնախումբն որոշած լինելով որ Սէվաստոպոլէն եկող նաւերն 8 օր քարանթինա ստանան, այդ որոշումն երէկուընէ սկսեալ ի գործ կը դրուի ։

Օսմանեան Պանքայի Լոնտրայի ճիւղին Տնօրէն Պ. Ռ. Աթէրֆիլտ, որ տակաւին մայրաքաղաքս կը գտնուի, այսօր Պրուսա ուղեւորեցաւ ։

Մեծ–Շուկայ, Փէրտահճի փողոց Շէքէրճի Օղլուի սնանկութիւնը ծանուցին երէկ ։ Սա Հրէայ վաճառական մ'է՝ սպիտակ կերպասուց՝ և բացը կը հաշուուի 11,000 ոսկի, որոյ 8000 ոսկին Հայ վաճառականներու կը պարտի ։

Սնանկութիւնն յայտնուած է շաբաթ օրը և կ'ըսուի թէ պարտատէրք կրցած են 100ին 50 վճարում մը ստանալու կարգադրութիւն մ'ընել ։

Իսթէրն Էքսբրէս իւր երէկի թերթին մէջ «Երկաթուղիք ի Փոքր Ասիա» խորագրով խմբագրական յօդուած մը գրած է, յորում Օսմանեան կառավարութեան դրամական կացութեան և սոյն օրինակ կարեւոր ձեռնարկի մը օգուտներուն վրայ խօսելով, կ'ըսէ «Փոքր Ասիոյ մէջ երկաթուղիներ հաստատելու համար համաձայնութիւն մը գոյացնելու հաւանականութեան վրայ գոհացուցիչ լուրեր կը հասնին մեզ ։ Առաջին անգամը չէ որ այս տեսակ յոյս մը կը տածենք, բայց մինչեւ ցարդ յուսախաբութիւն միայն ունեցանք ։ Այս անգամ գաղափարն աւելի որոշ է և այս ձեռնարկն ի գլուխ հանելու կոչուելիք անձանց անուանք յոյժ պատուաւոր են ։ Եթէ այս յոյս իրականութիւն գտնէ, յայնժամ պէտք է անկեղծօրէն շնորհաւորել կառավարութիւնն և երկիրը ։»

Ափրիկեան Տրիպոլսոյ պաշտօնական լրագիրը Թարապլուս կը գրէ թէ Ֆէզզանի կառավարիչը ծանուցած է գաւառին կուսակալին թէ հոկտ. 5ին Սուտանեցւոց կարաւան մը կըսպասուէր Տրիպոլսոյ Սալմակաթ կոչուած տեղը ։

Հարիւր ութսուն Թաթար գաղթականք նախընթաց օրը մայրաքաղաքս եկան ։

Բերայի թերթ մը կիմանայ թէ միտադրութիւն կայ կենդանաբանական պարտէզ մը հաստատել Թագսիմի Թաղապետական պարտէզի մօտակայ բլրակին վրայ, որ յարմարագոյն վայրը կրնայ լինիլ այս տեսակ հաստատութեան մը համար ։ Տաք կլիմայի վարժուած կենդանիք պիտի կրնան դիւրաւ ապաստանիլ բլրակին խորտուբորտ վայրերն, որ աւելի տաք են բաղդատաբար ։ Արդէն իսկ Թուրքիա իւր ընդարձակ երկիրներուն մէջ այնքան այլազան կենդանիներ ունի որ ո՛ ինքնին կրնան այս տեսակ պարտէզ մը կազմել · Ափրիկէի կենդանիք ևս մեծ սակ մը կրնան գրաւել, և Ափրիկէի և Հնդկաստանի կենդանեաց փոխադրութիւնը կը դիւրանայ Սուէզի ճանբով ։

Կայսերական Թիֆէնկպաշ Հիւսէյին Հիւսնի փաշայի հիւանդութիւնը միշտ նոյն տագնապալից վիճակին մէջ է ։ Մայրաքաղաքիս երեւելի բժիշկներն որք կը դարմանեն զնորին վսեմութիւն տարակարծիք գտնուած են · մէկ մասը կ'ըսէ թէ հիւանդն անյոյս վիճակի մէջ է · միւս մասը կ'ըսէ թէ ազատելու մեծ յոյս կայ ։ Սաստիկ վիճաբանութիւն մը բացուած է երկուց կողմանց և գլխաւորաբար Տօքթօր Միլիքի (յոռետես) և Տօքթօր Զամպաքոյի (լաւատես) միջեւ ։ Տօքթօր Խորասանճեան էֆէնտի ևս համամիտ է այս վերջնոյն ։ Յոռետեսք հետեւ ուրեմն ձեռք քաշեր են և հիւանդն յանձնուեր է Տօքթօր Զամպաքոյի և իւր համամիտներու խնամոց ։

Եւրոպական լրագիրք իբր հետաքրքրական դէպք մը կը յիշատակեն թէ նախորդ Խտիվ Իսմայիլ փաշա Բարիզու մէջ այցելութիւն տուեր է պապական նուիրակ Տ. Տի Բէնտէի ։

Լոնտրայէն կը հեռագրեն թէ Սպարթալի դրամատան սնանկութիւնը կարծուածին չափ մեծ չէ եղեր և մէկ մի անգլիական ոսկւոյ փոխարէն 12 շիլին, այսինքն հարիւրին 60 պիտի կրնայ տրուիլ եղեր պարտատէրաց։ Թայմզ կ'ըսէ թէ յիշեալ դրամատունը վտանգաւոր կերպով որ և է շահադիտական գործողութեան չէ ձեռնարկած ։

«Էժիբշըն Կազէթ» կ'իմանայ թէ հոկտեմբեր ամսոյ մէջ 274,349 ¼ օխա ծխախոտ և սիկար ներմուծուեր են յԵգիպտոս, և որոց համար 9469 եգիպտական ոսկւոյ մաքս վճարուեր է ։ Դիտելի է որ այս քանակութեան մէջ միայն 10 ¼ հոխա Հավանայի սիկար կայ, որովհետեւ ասոնց տուփին համար 50 ղրուշ մաքս կ'առնուի, մինչդեռ միւս սիկառներու օխային 10 ղրուշ մաքս կը վճարուի ։

Քաղաքապետ Մազհար փաշա որոշած է իւր վարչութեան մէջ ինչ ինչ բարեւոքումներ ներմուծել ։ Նախառաջ որոշած է որ յանձնարարական չընդունուի քաղաքապահ զօրաց ընտրութեան համար · յատուկ յանձնաժողով մը պիտի կազմուի որոյ առջեւ քննութեան պիտի ենթարկին ներկայացեալ անձինք և վկայական ստանան ։

Ծովային պաշտօնատան մէջ վերջերս երեւան եկած զեղծում մը և

Մուսթաֆա անուն անձի մը բանտարկութիւնը պատմած ենք արդէն ։ Ծովային Նախարարութեան կողմէ առ Թարիգ ուղղեալ պաշտօնական տեղեկութիւն մը հետեւեալ կերպով կուղղէ ցարդ պատմուած իրողութիւնն ։

Յիշեալ պաշտօնատունը մի քանի սպայից պարտամուրհակներ տուած էր անվճար ամսականաց հաշւոյն, զորս ապա Հավալէի հետ փոխանակած էր ։ Մուսթաֆա էֆէնտի բանալով այն պարկն ուր այդ մուրհակները պահուած էին, Ղալաթիոյ սեղանաւորի մը ծախած էր զանոնք ։ Այս կերպով մուրհակները Վասիլաքի և Այասեան անուն երկու վաճառականաց ձեռք անցած էին որք ծովային պաշտօնատան հետ գործ ունենալով, անդ ներկայացած էին դրամը գանձելու համար ։ Ասոր վրայ կասկած յարուցուելով, քննութիւն բացուեր և Մուսթաֆայի յանցաւորութիւնը ճանչցուեր է։ Մուրհակներու գումարը կը հասնի 191,302 ղրուշի ։

Սելանիկի քաղաքապետական ժողովոյ Նախագահ Ալի էֆէնտի մեռեր է։

Երէկ ռուսական Նաքիմոֆ շոգենաւով երկու հարիւր շրջանաւարտ զինուոր ղրկուեցան Յեգիպտոս ։

Այս օրերս դարձեալ բաւական թըւով չէրքէզ գաղթականք կսպասուին Կերչէն ։

Լիւլէ—Պուրկազի բնակիչք տեղական իշխանութեան թողեր են 5507 ղրուշի գումար մը զոր կը պահանջէին ապրանաց փոխադրութեան համար, պայմանաւ որ այդ գումարով վերանորոգուի կառավարութեան պաշտօնատունը ։

Բերայի ոստիկանութեան պաշտօնէաներէն Եուսուֆ էֆէնտի, որոյ ապօրէն ընթացից դէմ Բերայի թերթերը շատ անգամ կը գանգատէին, անցեալները Թրօգատէրօ զբօսարանին մէջ, ուր պատուաւոր անձինք կը յաճախեն, իւր պաշտօնի սահմանէն դուրս ելած և խել մը սպառնալիքներ բրած լինելով, Թարիգ կըսէ թէ այդ պաշտօնեայն անմիջապէս ձերբակալուած և քննութեան ենթարկուած է ։

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱ

ԱԶԴ

Օսմանեան Հանրային Պարտուց Վարչական խորհուրդը վերջերս ծանուցած էր հասարակութեան թէ Ընդհանուր Պարտուց 5 0/0 տոկոսաւոր քանի մը արժէթղթեր, որոց թիւը նշանակուած էր լրագրաց միջոցաւ, չէին գտնուիր այն արժէթղթոց մէջ որոց տոկոսի և գըլխաւճարի վճարումը իրեն կը վերաբերի 1881 դեկտեմբեր 8/20ի կայսերական Իրատէին համաձայն ։

Նշանակեալ արժէթղթոց մէջ կը գտնուին հետեւեալ թիւերը կրող արժէթուղթք ևս.

Թիւ		արժէթղթ.	ոսկւոյ
626,648–626,660	այսինքն	13	100
626,666–626,672	»	7	»
626,681–626,710	»	30	»
627,384–627 392	»	9	»
627,396–627,402	»	7	»
627,404–627,474	»	71	»
627,481–627,490	»	10	»
627,498–627,500	»	3	»
760,004–	»	1	50

Օսմանեան Կայսերական Պանքան, որոյ յանձնարարուած է Ելմտական Պաշտօնատան կողմէ այս վերջին արժէթըղթերը շրջաբերութենէ քաշել, կը ծանուցանէ արժէտէրաց թէ կրնան զանոնք ներկայացնել իւր Ղալաթիոյ գրասենեակն, Պորսայի գնոց համեմատ անոնց արժէքը տալով ստանալու համար։

Կ. Պոլիս, 25 Նոյեմբեր 1884

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Փարիզ, 26 Նոյեմբեր

Երեսփոխանական ժողովին մէջ Նախարարապետ Պ. Ժիւլ Ֆէրրի՝ հարցման մը պատասխանելով ըսաւ թէ Կառավարութիւնը կ'ընդունի Անգլիոյ միջնորդութիւնը Ֆրանքօ–չինական խնդրոյն մէջ, Քէլունկի և Թամսիւիի (Ֆորմոզա) առժամեայ գրաւման հիման վրայ ։

Նախարարապետը ծանոյց նաեւ թէ ի բաց առեալ Թօնքինի համար խնդրուած 7 միլիոնի վարկն, կառավարութիւնը 43 միլիոնի ուրիշ վարկ մը պիտի խնդրէ 1885 տարւոյ առաջին վեցամսեին համար (Ծովահաղորդ–Բիւրօ) ։

ՖՐԱՆՍԱ ԵՒ ՄԱՐՈՔ

Թանժէր, 26 Նոյմ.

Ֆրանսայի և Մարոքի միջեւ առկախ մընացած դժուարութիւնք կարգադրուեցան ։ Մարոքի Սուլթան Մուլէյ–Հասան Ֆրանսական դեսպան Պ. Օրտէկայի նամակ մը ղրկեց, յորում ամենակատարեալ կերպիւ ներողութիւն կը խնդրէ քանի մը պաշտօնատարաց ընդդէմ Ֆրանսացիներու կամ Ֆրանսական պաշտպանեալներու ի գործ դըրած անիրաւութեանց համար ։

ԱՆԳԼԻՈՅ ՊԱՆՔԱ

Լոնտրա, 27 Նոյեմբեր

Պատրաստ մետաղադրամ — յաւելում — անգլ. ոսկի	166,000
Պանքնօթք իպահեստի — յաւելում — անգլ. ոսկի	363,000
